Զանգերի և զանգակատների վերաբերյալ հետաքրքիր վկայություններ են պահպանվել հայկական միջնադարյան աղբյուրներում։ Հաղբատի զանգակատան մասին Կիրակոս Գանձակեցին գրում է, որ Համազասպը «շինեաց հրաշալի շինուած, ուր զզանգակս կախէին»[3]։ Նույն զանգակատանը պահպանված մի արձանագրության մեջ ասված է. «Շինեցաւ գեղեցկազարդ տաճարս աստուծոյ՝ զարթուցանող փառաբանչաց տեառն...»[4]։ Եղեգնաձորի շրջանի Սպիտակավոր-Աստվածածին վանքի զանգակատան արևմտյան երեսի խորշի պատին գրված է. «Թվիս։ ՉՀԹ (1330)։ ...ես Յովհաննէս եւ կենակից իմ Թաճն շինացաք զսնկակս եւ զտուն նորա տուաք»[5]։ 1875 թ. Գնդեվանքի բակում, տնտեսական շինությունների առաջ բացված մի հոր-թաքստոցից հանված պղնձե սպասների և անոթների մեջ եղել է և մի զանգ (մոտ 32 կգ) հետևյալ արձանագրությամբ. «ՉԾԶ։Թվ. զՍարկաւագ քահանայ յիշէք ի Քրիստոս, որ ստացա քսա»[6]։ Այդ հավաքածուից, դժբախտաբար, ոչինչ չի պահպանվել։

Արձանագրությամբ զանգեր են եղել Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանում՝ Եղիշ-Առաքյալ կամ Ջրվշտիկ վանքում։ Զանգերից մեկի վրա (կոտրված է) պահպանվել է շատ հետաքրքիր արձանագրություն. «Յիշատակ ի զանկակս Ղազարին, որ է որդի Քրիգորին, է թոռն Եաւրին. Յուսեփի որդի Պապէն, որ է Պողոս թուլգեր (հյուսն). Ես Շահնա կարմրեցի (ձուլեցի). գինն է Դ թուման»[7]։ Արձանագրությունն ուշ շրջանի է, սակայն մեծապես արժեքավոր, որովհետև այստեղ նշված են կաղապար պատրաստող և ձուլող վարպետները։

Գանձասարի արձանագրություններից մեկում ասված է. «Թվ. ՊԺ (1361) Իշխանութեամբ մեծի Իւանէի ես տէր Կոստանդ մեծ փափագանաւք գնեցի զզանկականիս, սուրբ ուխտս բերի»[8]։

Փոքր զանգ գտնվել է և Հաղարծնում, հանրահայտ կաթսայի հետ մեկտեղ, մոտ 32 կգ քաշով[9]։ Լեռնային Ղարաբաղի Բանանց գյուղի մոտ գտնվող Թարգմանչաց անապատում հայտնի է XVII դարի մի արձանագիր զանգ հետևյալ տեղեկությամբ. «Յիշատակ է Ասլովի որդի Խոճայ Ղազարին ի դուռն Բանանցայ սուրբ Անապատին թվ ՌՃԺԶ (1667)»[10]։

---

[3] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 115։

[4] Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 222։

[5] Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, III, Երևան, 1967, էջ 287։

[6] Տե՛ս «Փորձ» 1877/78, էջ 358, Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 107, Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 20։

[7] Մակար Բարխուդարյան, Արցախ, Բաքու, 1895, էջ 226։

[8] Նույն տեղում, էջ 177—178։

[9] Տե՛ս Նույն տեղը, էջ 369։

[10] Նույն տեղում, էջ 285։ Զանգերի վերաբերյալ մի հետաքրքիր հանելուկ է պահպանվել Ներսես Շնորհալու մոտ.

«Երկու եղբարք միմեանց նման,
Որք են շարեալ ի մի գերան,
Իբր զմահապարտ են ի կախման
Ժամէ ի ժամ զաղաղակ բառնան»։